ապրեցաւ Եփրեմ Եղեսիոյ մէջ, եւ ճիշդ այդ շրջանին է՝ որ գրեց իր գործերուն մեծամասնութիւնը, գլխաւորապէս Սուրբ Գրքին Մեկնութիւնները։ Այդ երկու քրիստոնեայ նշանաւոր քաղաքները, Մծբին ու Եղեսիա, այնքան սիրելի Եփրեմի սրտին, մի՛թէ իրենց բարգաւաճումը ու զանազան սպառնացող վտանգներէ փրկութիւնը չէ՞ն պարտիր անոր աղօթքներուն ու խնամքներուն։

Եփրեմ, ի բնէ լռակեաց, խոհուն ու մենասէր, պիտի դերադասէր անշուշտ թողուլ աշխարհ, քաշուիլ, առանձնանալ ա-նապատին խորը, լեռան մը ծայրը կամ քարայրի մը մէջ, ինչպէս հազարաւորներ այն դարուն, եւ ապրիլ ներքին հոգեւոր կեանք մը, ինքզինքը բոլորովին Աստուծոյ նուիրած, ինչպէս Ս. Անտոն անապատական մը։ Սակայն ո՛չ. անոր մեծագոյն փափաքն էր սուրբ ըլլալ, բայց սուրբ ընել նաեւ իր մերձաւորները։ Տուած էր Աստուած անոր թանկագին ձիրքեր, գրական տաղանդ մը, զգայուն սիրտ մը, միտք մը հանճարեղ, պերճախօս լեզու մը, զորոնք կ'ուզէր շահեցնել եւ օգտակար ընել իր եղբայրներուն։ Անոր մէջ կ'եռար կեանքը, դուրս կը գեղուր, անկարող ըլլալով զսպել իր մէջ գործունէութեան բուռն թափը, երբ կը տեսնէր մանաւանդ անտեսուած Աստուծոյ պաշտօնը, կրօնքը հալածուած, ճշմարտութիւնը վտարուած։ Այն ժամանակ, թէեւ հեթանոսութիւնը տկարացած, հալածանքները դադրած, քրիստոնէութիւնը յաղթանակած ու պետութեան կրօնքը դարձած, սակայն ուրիշ թաքուն ու նենգաւոր աղանդներ՝ նոյնիսկ քրիստոնէական անուան տակ՝ կը մաքառէին կատաղօրէն ճշմարիտ հաւատքին դէմ, խախտելով անոր հիմերն ու բարոյականը, որոնց դէմ կռուելու համար պէտք կար կորովի ու կարող միտքերու, եւ ճիշդ այդ նպատակին նուիրեց Եփրեմ իր միտքն ու գրիչը։ Ան արտադրած է տասնեակ հազարաւոր ճառեր ; քարոզներ, երգեր ու տաղեր, ուժեղ ու վառվռուն երեւակայութեամբ հիւսուած, վսեմ գաղափարներով ճոխացած, սրտայոյզ եղանակներով ներդաշնակուած, աստուածաբանական խորունկ հմտութեամբ կուռ, որոնցմէ շատերը կորսուած կամ խանդարուած են։ Անոր միտքը՝ ինչպէս գրիչը՝ վայլակի պէս երագ, կ'ելլէր ու կ'իջնէր՝ հաւատքի խորհուրդներուն բարձրութեանց կամ խորութեանց համեմատ։ Զեն պակսիր իրեն՝ զուսեղ ու հզօր բացատրութիւններ, կենդանի պատկերներ, ցնցելու եւ յուզելու իր ունկնդիրներուն ամէնէն կարծր սիրտերը, մանաւանդ երբ վերջին ահաւոր դատաստանը կը ներկայացնէ անոնց առջեւ։ Զունի ճառ մը, ուր հզօր փաստերով չապացուցանէ Քրիստոսի աստուածութիւնը ու հաւատքին ամէնէն բարձր խորհուրդները։ Ան ապրած ու գործած է միայն պաշտպանելու համար Քրիստոսի սուրբ հաւատքը, Եկեղեցւոյ ուղիղ վարդապետութիւնը, ջախջախելու ճշմարտութեան ոսոխները։ Ան՝ դերազանցօրէն ճըգնաւորի մը կեանքը ապրած, խստօրէն մահացուցած մարմինն ու զգայարանքները, մեռուցած կեանքը, առաթուր կոխած երկրաւոր հաճոյքները, մթին ու անընակելի փապարներու մէջ փակած ինքզինքը, — երբ աղէտ մը կամ արկած մը սպառնար հաւատացեալներուն կամ քաղաքացիներուն, երբ տեսնէր մանաւանդ կրօնքը կամ հայրենիքը վտանգի մէջ, — այն հեղիկ ու լռիկ արեգան՝ առիւծ կը դառնար, հուր ու բոց կը ժայթքէր, կը թողուր խղիկը, կը վազէր օգնելու՝ պաշտպանելու կրօնքն ու հայրենիքը։ Երբ սով մը, գետնաշարժ մը, ո՛ եւ է աղէտ մը կամ ճարակող մահացու հիւանդութիւն մը պատահէր քաղաքին մէջ կամ շրջականները, մինչ հարուստները կամ քաղաքին պետերը խոյս կու տային՝ փորձանքէն պրծելու համար, — ինքն էր՝ կը վազէր հոգալու չքաւորները, վիրաւորները, ուտելիք կամ զգեստեղէն ճարելով անոնց, անկելանոցներ կամ պատսպարաններ գտնելու թշուառներուն, հոգեւորապէս ու մարմնապէս սփոփելու զանոնք, ինչպէս պատահեցաւ 370–372 տարիներուն, երբ ահագին հրոսակներ վայրագ Հոներու խուժեցին՝ հիմնայատակ ընելու Եդեսիա ու իր շրջակաները, որուն հետեւանքով աղետալի սով մը ու չարաչար հիւանդութիւններ օրհասարեր եղան հազարաւորներու։ Նոյն ժամանակները սոսկալի գետնաշարժ մ'ալ քարուքանդ ըրաւ Նիկոմիդիա եւ ուրիշ զանազան քաղաքներ, այնքան աղետալի եւ սարսռալի, որ լացաւ ու լացուց՝ ողբերով ու երգերով՝ իր սիրելի ժողովուրդը, ապաշխարութեան եւ ողորմութեան յորդորելով զիրենք, ինչպէս կը կարդանք իր Ողբ Նիկոմիդիոյ քերթուածին մէջ։

Արեւելեան անզուգական բանաստեղծ մը, այնպիսի խրոխտ թռիչներով, որոնց մը, այնպիսի խրոխտ թռիչներով, որոնց մանկարող են հասնիլ ամէնէն հզօր միտքերն անդամ, երբ չունին աստուածային սիրոյն կայծը։ Եկեղեցւոյ շատ քիչ Հայրեր ու Վարդապետներ այնքան նուրբ եւ զգայուն թելերով յուզեր ու գորովեր են հոգիները, այնքան վառեր ու զմայլեցուցեր են սիրտերը երկնքին կարօտով՝ ինչպէս ինքը։ Նոյնիսկ պիտի յանդգնիմ ըսելու, թէ շատ քիչ սրբազան քերթողներ յաջողեր են այնքան ճոխ, հիւթեղ ու զուսեղ նիւթեր արտադրել, ինչպէս Ս. Եփրեմ, որոնք միայն հոգին ու միտքը չէ՛ որ կը լուսաւորեն, միայն սիրտերը չէ՛ որ կը հրճուեցնեն, այլ ցաւերն ու վիշտերը կը սփոփեն, ստութեան ու չարութեան մռայլը կը փարատեն։ Ս. Եփրեմին այդ քերթուածները՝ տաղեր ու երգեր են, խտացուցած իրենց մէջ Ս. Գրքին ու մանաւանդ Աւետարանին ճշմարտութիւններն ու յորդորները, որոնցմով հոգիները զինուած՝ անխոցելի կը մնան մոլութեանց ու մոլորութեանց հարուածներէն։

Հ. Յ. ԹՈՐՈՍԵԱՆ

(Շարունակելի)

ԻՐԱՆԱՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

ԱՇՈՒՂ ԲԱՂԷՐ ՕՂԼԻ ՂԱԶԱՐ

(1690–1770)

ԿԵԱՆՔԸ

Նոր-Ջուղայի աշուղական դրականութեան պատմութեան մէջ ուրոյն տեղ է դրաւում Բաղէր օղլի Ղազարը, որ յայտնի է ո՛չ այնքան իր երգերի գեղարուեստական կառուցածքով, որքան ԺԸ դարի Ջուղահայ կեանքի եւ պատմական դէպքերի մասին գրած տաղերով։

Այս աշուղի կեանքի պատմութեան գլխաւոր էջերը լուսաբանող դրաւոր ստոյգ աղբիւրներ, տարաբախտաբար, շատ քիչ ունինք։ Թէ ո՞ր ընտանիքում է ծնուել, ի՞նչ կրթութիւն է ստացել, ո՞ւմ մօտ եւ ի՞նչպիսի ազդեցութիւններ է կրել, յայտնի չեն։ Միայն կան հատուկոտոր տեղեկութիւններ, որոնց աշուղը յիշատակում է իր երգերում։ Այսպէս՝ նրա յօրինած «Տաղ Ջուղու» խորագրով երգի յիշատակութիւնից երեւում է, որ իր իսկական անունն է Ղազար։

«Ջուղա ամենայն բաղաքի պլամ[1] ա,
Փչանայ վատ մարդն, որ մարդին զպլամ[2] ա.
Գովասանութիւնն երկու բեպամ[3] ա,
Ասաւ Բաղրամ օղլի Ղազարն Ջուղու»։

(1) Աշխարհ, յայտնի։ – (2) Զար, բռնակալ։ (3) խօսք։

digitised by A.R.A.R.@

Մի այլ երգի մէջ նա իրեն կոչում է Նոր–Ջուղայեցի, իսկ «Խաղ վասն աւերածոյ Ջուղայու» տաղում գրում է. «Մեր Ջուղու»: Այդ պատմական արւարձանի մասին նա գովեստով է խօսում եւ անւանում. «Աստծոյ օրհնած, չէն ու բարդարար» մի քաղաք: Այդտեղ էլ նա մի օր եղել է Բարանենց ընտանիքում, որոնց վերայ գրել է մի զաւեշտ: Աշուղի մասին կենսագրական համառօտ գծեր գտնում ենք նաեւ Նոր–Ջուղայի պատմութեան Բ. հատորի 156–րդ էջում, ուր կարդում ենք հետեւեալ տողերը.

«Բաղէր օղլի էր երգիչ կամ աշուղ Ջուղայեցի: Ունի սա գրագրում ցուցս բարոյական խրատուց, այլ նշանաւոր են երկու տաղք կամ ցուցք նորա, մինն ի գովեստ Ջուղայու ասացեալ, եւ միւսն եղեռերգութիւն վիճակի նորա: Ցեղերերգութիւնն նորին կայ Թուական Ազարիայի ՃԼԱ – 131. յորում ամի երգէ ինքն զայն ցուցիւր, որով յայտնի լինի, թէ նա յամի 1730՝ ց45, երգեալ զայն երկու երգսն իւր»:

Այս բոլոր տեւալներից կարող ենք հետեւցնել, որ աշուղ Բաղէրը ծնւել, մեծացել եւ իր կեանքի մեծ մասն անց է կացրել Նոր–Ջուղայում եւ նրա շրջակայքում. գոնէ այնտեղ էր նա 1746 թուին, երբ Նադիր շահը հարստահարութիւնների ենթարկեց արւարձանի հայերին: Այդ շրջանում նա միշտ ապրել է ժողովրդի մէջ եւ եղել է Նոր–Ջուղայի աշուղը: Այդ հանգամանքն է հաստատում «Նազլու Դիլբար» խորագրով երգը.

«Ասի. քեզ հետ ասող լսողն ո՞վ ա,
Ասէց. Բաղէր օղլի աշուղն Ջուղու»:

Բնորոշ է եւ այն, որ աշուղ Բաղէրը ո՛չ միայն նւագել է սազի վրայ, այլ եւ եղանակներ է յօրինել եւ երգել, ինչպէս ինքն է ընդգծում.

«Ասի. Բաղէր օղլիս ածող, կանչող ամ,
Ասէց. կշտիս նստիր՝ դամ պա՛ սիրոյն»:

Սակայն նա ո՛չ միայն Նոր–Ջուղայի ժողովրդի մէջ վառ է պահել աշուղական երգը եւ իր քնարով փայլ է տւել նրա հանդէսներին, այլ եւ նւագարանն ուսին դցած՝ շրջել է գիւղից գիւղ եւ գուսանական սազն ու տաղերը հնչեցրել է գիւղական ժողովրդի մէջ: Ահա իր վկայութիւնը.

«Բաղէր օղլի՛, դու քեզ ջան տուր,
Սազդ վեր առ, գնա՛ գեղէց գեղ ման տուր»:

Թէ ե՞րբ է վախճանւել եւ ո՞ւր են հանդչում նրա աճիւնները, յայտնի չէ: Ցամենայն դէպս, պէտք է ենթադրել, որ մեռած պիտի լինի 1746 թուականից յետոյ, որովհետեւ այդ թուին նա գրել է իր պատմական երգերը: Նոյն շրջանում էլ նա միշտ ապրել է ժողովրդի սրտին մօտիկ եւ երգել նրա ցաւերն ու տանջանքները:

ԵՐԳԵՐԸ

Աշուղ Բաղէր օղլու երգերը բազմերանգն են. նա հիւսել է բարոյական–խրատական տաղեր. յօրինել է սիրային մօտիւներ, երգիծական երգեր եւ պատմական ոտանաւորներ: Դրանցից շատերը, դժբախտաբար, կորել են: 1921 թուին Նոր–Ջուղայում գտնւած հին ձեռագիր տաղարաններից եւ այլ աղբիւրներից փրկեցինք աշուղի 20 քերթւածները: Ճիշտ է, դրանք գրական տեսակէտից մի առանձին արժէք չեն ներկայացնում եւ գեղարւեստական թոյլ կառուցւածք ունեն, բայց իրենց ներքին բովանդակութեամբ հետաքրքրական են եւ ուշադրաւ: Դրանցից երեքը՝ 1) «Խաղ Բաղէր օղլու վասն աւերածոյ Ջուղայու», 2) «Խաղ Բաղէր օղլու վասն Նադիր շահի սպանման» եւ 3) «Թիւն ՃԼԱ» (1746) նախ լոյս են տեսել 1863 թուին Եղիազար Տէր–Ցարութիւնեանի խմբագրած վիմատիպ «Եղբայրասէր» թերթի 47 – 48 թւերում, «Բաղէր օղլի Ղազարն Ջուղու» խորագրով, ապա տպագրւել են Ցարութիւն Տէր–Ցովհանեանցի «Պատմութիւն Նոր–Ջուղայու» Ա. հատորի 258–264 էջերում, 1880 թուին: Մնացեալ 16 երգերը գտնւում են մեր գրական արխիւում: Ինչո՞ւմն է կայանում, սակայն, այդ երգերի հասարակական արժէքը: — Նրանում, որ այդ տաղերը դրսեւորում են ո՛չ միայն աշուղի անձնական յոյզերն ու ապրումները, այլ եւ բնորոշ դաղափար են տալիս ԺԷ դարի մինչեւ կէսն ապրող Նոր–Ջուղայի հայ ժողովրդի քաղաքական – տնտեսական դրութեան մասին: Այդ ոտանաւորներն ընդգծում են նաեւ մի կարեւոր հանգամանք, որ աշուղը չի երգել միայն իր անհատական խոհերն ու մտորումները, այլ, ընդհակառակը, դուրս գալով անձնական եսի սահմանափակ շրջանից, խորապէս ապրել է ու տանջւել ժողովրդի կեանքով: Նա ըստեղծագործութեան նիւթ է դարձրել իր ժամանակի հասարակութեան կեանքը, վրձինել է նրանց տնտեսական դրութեան պատկերը, երգել է նրանց կրած անլուր տանջանքներն ու դառն օրերը: Այդտեղ էլ կայանում է աշուղի երգերի հասարակական նշանակութիւնը: Բայց այդ ոտանաւորների պատմական արժէքն էլ աւելի պարզ եւ աւելի խոր կերպով ըմբռնելու համար նախ համառօտ գծերով պատկերենք, թէ ի՞նչ էր ներկայացնում Հարաւային Իրանում, առանձնապէս Նոր–Ջուղայում, ապրող հայերի տնտեսական եւ քաղաքական դրութիւնը:

ՋՈՒՂԱՀԱՅԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

Նոր–Ջուղայի հայ ժողովրդի տնտեսական կեանքի զարգացման պատմութիւնն սկսում է ԺԷ դարից եւ առանձին փայլ ստանում ԺԸ դարում: Դա Իրանի առեւտրական կապիտալի ձեւակերպման շրջանն է: Դա այն պատմաշրջանն է, երբ Պարսկաստանի առեւտրական ասպարիզում սակաւաթիւ էին պարսիկ խոշոր վաճառականները եւ դեռ չկային հմուտ արհեստաւորներ: Ահա ֆէօդալական այդ շրջանում Իրանի տնտեսա – առեւտրական դիրքերում երեւան են գալիս մի խումբ նախաձեռնող հայ վաճառականներ ու հմուտ արհեստաւորներ, որոնք շնորհիւ իրենց կազմակերպչական ձիրքի եւ ընդունակութեան, կարողանում են կարճ ժամանակում տընտեսապէս առաջադիմել եւ զարկ տալ Իրանի թէ՛ արհեստներին եւ թէ՛ վաճառականութեանը: Այսպէս, ուրեմն, Պարսկաստանի պատմութեան մէջ, տնտեսական ասպարիզում, հանդէս են գալիս առեւտրական կապիտալի լաւագոյն ներկայացուցիչները: Դրանք, գլխաւորապէս Նոր–Ջուղայեցի մեծահամբաւ հայ վաճառականներն են, որոնցից ԺԷ դարի չէմքին, 1605–1671 թուականը, 66 տարւայ ընթացքում փայլում են՝ խօջա Նազար, խօջա Սաֆրազ, խօջա Մուշեղ, խօջա Հայկազ, խօջա Էլիազ, խօջա Խաչիկ Հայկազեան, խօջա Զալալ եւ ուրիշներ, որոնք ո՛չ միայն վայելում են Շահ–Աբբաս Մեծի հովանաւորութիւնն ու աջակցութիւնը, այլ եւ առանձին հրովարտակով իրաւունք ստանում Պարսկաստանում ազատ վաճառականութիւն եւ առեւտուր անելու, երեւոյթներ, որոնց շնորհիւ էլ նրանք դիզում են խոշոր հարստութիւն: Ահա թէ ինչո՛ւ այդ պատմաշրջանում Նոր–Ջուղան ո՛չ միայն դառնում է առեւտրական մի կեդրոն, այլ զարգանում « բարձրակառոյց ու գեղեցկաշէն » վանքով, եկեղեցիներով եւ «թագաւորավայել ապարանքներով»:

— «Հմբաւ վաճառականութեան Ջուղայեցւոց, — կարդում ենք Ցարութիւն Տէր–Ցովհանեանցի «Պատմութիւն Նոր – Ջուղայու» գրքի (Ա. հատոր) 157–158–րդ էջերում, — բազում տեղիս քաջայայտ է եւ հանդիսացեալ ըստ մեծութեան մասին: Նա եղեւ ազգիւրն , որ զհարստութիւնս գեսօրէն գեղեալ եմոյծ 'ի Ջուղա, որով ջուղայեցիք զբարձրակառոյց եւ զգեղեցկաշէն եկեղեցիս՝ եւ զթագաւորավայել

digitised by A.R.A.R.@

պալատանիս եւ զապարանս կառուցանել մարթացան եւ եղեն ականաւորք 'ի մէջ աշխարհիս»:

Նշենք եւ այն, որ խօջա հայ վաճառականների խանութները զարդարում են գըլխաւորապէս Նոր–Ջուղայի Նազարի կոչուած անւանի պողոտան, ուր նրանք իրենց առեւտրական կապիտալը շրջանառութեան մէջ դնելու նպատակով մշակում են նորանոր ծրագիրներ: Այդ փողոցում էլ կանգ են առնում նրանց ուղտերի եւ ջորիների ապրանքատար կարաւանները: Այս երեւոյթների մասին վկայում է նաեւ աշուղ Բաղէր օղլի Ղազարը: Ժամանակի Նոր–Ջուղայեցի խօջա հայ վաճառականների եւ Նազարի կոչուած յայտնի պողոտայի պատկերն իր մի երգում նա գծում է այսպէս.

«Ռաստայ[4] խէրէվան'[5] երկու տեղ մէյդան[6],
Դուքանն փաֆիզ[7] ա՝ բազարն Ջուղու.
Դուքանն փաֆիզ ա, մարդիկն սափաթով[8],
Աղինին նստոտած՝ ոսկէ սահաթով»:

Սակայն, միայն Նոր–Ջուղայում չէ, որ խօջա վաճառականները շահագործման մէջ են դնում իրենց ապրանքները: Նրանք շաբաթը մի անգամ համախմբւում են նաեւ Սպահանի Նախշըջըհունու պանդոկը եւ վաճառում իրենց իրերը: Բնորոշ է եւ այն, որ Նոր–Ջուղայեցի խոշոր կապիտալիստ խօջաներից իւրաքանչիւրն ունենում է 20 – 27 ստորագրեալ վաճառական: Նոյնպէս նրանք կազմում են առեւտրական ընկերութիւններ եւ շահագործման մէջ դնում իրենց դրամագլուխները: Անգամ տոկոսով փող են տալիս՝ 100–700 թուման, եւ շահագործում մանր վաճառականներին, առեւտրականներին ու փերեզակներին:

Սակայն, Նոր–Ջուղայեցի ազա վաճառականները միայն Իրանում չէ, որ անում են տնտեսական նւաճումներ եւ զարկ տալիս իրենց առեւտրական կապիտալին: Նոր չուկաներ նւաճելու մտքով տոգորւած՝ նրանք իրենց հայեացքներն ուղղում են դէպի հեռաւոր հորիզոններ: Պարսկաստանից անցնում են Եւրոպայի եւ Ասիայի գլխաւոր քաղաքները — Պարիզ, Վենետիկ, Ամստերդամ, Լվով (Լեմբերգ), Մոսկա, Թիֆլիս եւ այլ վայրեր: Անգամ անսահման տարածութիւններ կտրելով՝ շրջում են Հնդկաստանի եւ Ջաւայի այն ժամանակւայ առեւտրական խոշոր կենտրոնները — Մադրաս, Կալկաթա, Դաքքա, Սուրաթ, Բաթաւիա, Սուրբայա, Ամբանդ, Ռանգուն եւ այլ տեղեր, եւ նշանակալից դեր կատարում միջազգային առեւտրական կապիտալի զարգացման գործում: Այդ հանգամանքը վկայում է նաեւ պատմագիր Տէր–Յովհաննեանցն իր «Պատմութիւն Նոր Ջուղայու» Ա. գրքի 159–րդ էջում այսպէս.

«Բազուկ վաճառականութեանն Ջուղայեցւոց ձգեցաւ ընդ ամենայն աշխարհ, այլ առաւելապէս 'ի Ռուսաստանի եւ 'ի Հընդկաստանի սահմանս»:

Ահա Նոր–Ջուղայեցի այս երեւելի վաճառականների մասին սեղմ, բայց թանկագին տեղեկութիւն տալիս է նաեւ աշուղ Բաղէր օղլին: Իր մի տաղում նա երգում է այսպէս.

«Յարեւել, յարեւմուտ եւ ֆօլն[9] ծէրվըծէր[10] ա,
Բանի ա չորս կողմն սօվդագարն[11] Ջուղու.
Զորս կողմից դուս գայ ուրէնց նուէրն,
Կուշտացնին անկեալ, ֆօռ ու կաղէրն»:

Աշուղի այս քառեակից էլ երեւում է, որ նա, որպէս ժամանակակից եւ ականատես Նոր–Ջուղայի տնտեսական վերելքին, եղել է մեծահարուստ խօջա վաճառականների հոյակապ ապարանքներում, նւադել է ու երգել նրանց խնջոյքներում: Այդ մասին է վկայում նրա մի երգի հետեւեալ երկտողը.

(4) Ուղիղ, ուղղակի: – (5) Ճանապարհ, պողոտայ: – (6) Հրապարակ: – (7) Ցստակ, մաքուր: – (8) Բարեշնորհ:

(9) Բովանդակ: – (10) Ծայրից ծայր: – (11) Վաճառական:

«Ընթզար(12) ան, նստեն դօստ(13) ու մէհմանով(14),
Գինի ածեն խմեն, հաղիղաթ(15) բանով»:

Մնում է պարզել, թէ Նոր–Ջուղայեցի հարուստ հայ վաճառականներն Իրանից ինչպիսի՞ հում ապրանքներ են արտահանում դէպի Հնդկաստան, Ռուսաստան, Եւրոպա եւ ո՞րն է նրանց շահագործման հիմնական աղբիւրը: — Փաստական տեւանքներից երեւում է, որ Նոր–Ջուղայեցի ականաւոր վաճառականներն զբաղւում են գըլխաւորապէս մետաքսի, թանկագին գոհարների առեւտուրով: Այս մասին առաջ բերենք Նոր–Ջուղայի պատմագրի հետեւեալ տողերը.

«Սկսեալ 'ի 1626 ամէ ց1723 ամն հայք Ջուղայու կատարէին զառեւտուրս խամ մետաքսիւք թանկագին գոհարօք մարգարտօք՝ եւ ձեռագործօք այլ եւ այլ ապրանաց Պարսկաստանայ եւ Հնդկաստանի՝ 'ի տէրութեանն Ռուսաստանի» (էջ 176):

Աշուղ Բաղէր օղլին եւս թողել է երկու տող փաստաթուղթ, ուր նա տալիս է Նոր Ջուղայեցի խօջա վաճառականների բնորոշ յատկութիւններից մի քանի գծեր: Ահա նրա վկայութիւնը.

«Ողջ(16) սահաթ(17) շիուր(18) ան, ջուհայիր(19) շնաս(20),
Գոված ա սմսարն(21), ասնաֆին(22) Ջուղու»:

Նոր–Ջուղայեցի խօջա հայ վաճառականների արտահանած ապրանքների պատկերը տեսնում ենք նաեւ Տէր–Յովհաննեանցի «Պատմութիւն Նոր–Ջուղայու» գրքի 165–րդ էջում:

«Վաճառք նոցա եղեալ են, — գրում է պատմագիրը, — ըստ ամենայն նիւթոց իւրաքանչիւր վաճառատեղի քաղաքաց, իսկ երեւելի վաճառականք ըստ մեծի մասին պարապեալ են 'ի տուրեւառութիւն մարգարտի՝ մետաքսի՝ ազնիւ ցփսեաց եւ գոհարեղինաց»:

(12) Ակնկալ, կարօտ: – (13) Սիրելի: – (14) Հիւր: – (15) Ճշմարիտ:

Ուշագրաւ է եւ այն, որ Նոր–Ջուղայեցի յայտնի վաճառականներն զբաղւում են նաեւ 159 գրատ կշիռ ունեցող թանկագին եւ հազուագիւտ գոհարի առեւտուրով: Այդ խօջա վաճառականներից յայտնի են Յովհաննէս Ազուլխանեանն ու Սիմէօնը, որոնք գործում են գլխաւորապէս Սուրաթում: Դարաշրջանի առեւտրական–տնտեսական պատմութեան մէջ դա մի բացառիկ երեւոյթ է:

Բնորոշ է մի այլ հանգամանք: Նոր – Ջուղայեցի հայ վաճառականները գոհարեղէնի առեւտուրով այնքան են հարստանում, որ խօջա Զաքարիա Սարհադեանը, Ընկերութեան կողմից, 1660 թւին ռուսաց Ալէքսի Միխայելովիչ կայսրին նւիրում է ադամանդազարդ թագաւորական մի աթոռ: Այդ են վկայում «Բազմավէպ»–ի 1843 թւականի թ. 2–ի էջերը, ուր կարդում ենք հետեւեալը.

«Ռուսաց Ալէքս թագաւորին օրերը 1659 –ին Ասպահանցի հայ վաճառականներէն Զաքար Սարհատեան անունով մէկը, որ պարսից փոխարքային ալ գործակալն է եղեր, ծովով Աժտէրխան կու գայ, անկէց ալ 1660ին թագաւորական հրամանով Մոսկուա քաղաքն կը հասնի ինը ընկերով: Ասիկա թագաւորին ընծայ կը բերէ մէկ պըղնձի վերայ քաշած պատկեր մը. Քրիստոսի ընթրիքն, մէկ ոսկիէ մատնի, այլ եւ այլ սուղ բաժակներ, ազնիւ ըմպելիքներ ու անուշահոտ նիւթեր, բայց ամենէն երեւելի ընծան եղած է թագաւորական աթոռը, որ Զաքարին հայրը չիներ է եղեր: Ասոր շատ տեղը ոսկի է ու վրան մեծ ու պզտի 876 ադամանդ կայ, 1 լալ, 1223 յակինթ մանր ու խոշոր, երեք կարգ մարգարիտներով ձեւացուցած հրեշտակներ: Այն տենի վաճառականները անոնց ամենու գինը կտրեր են 24,443 ռուբլի»:

(16) Ամբողջ: – (17) Տէր: – (18) Հանճարամիտ, չնորհալի: – (19) Գոհարեղէն: – (20) Ճանաչող: – (21) Կրպակատէր: (22) Արհեստաւոր:

digitised by A.R.A.R.@

Ինչո՞ւ Նոր–Ջուղայեցի մեծահարուստ հայ վաճառականները թանկագին նվէրներ են տանում ռուսաց կայսրին, ի՞նչ էր այդ նվիրատուութեանց նպատակը: — Որպէսզի խօջաների առջեւ բացուին ցարական Ռուսաստանի առեւտրական դռները, որպէսզի կայսրը եւս արտօնութիւն տայ նրանց Ռուսաստանում ազատ առեւտուր անելու: Եւ նրանք իրենց տարած թանկագին նվէրներով ստանում են այդ իրաւունքը: Նրանց շնորհիւ էլ դեռ 1626 թուականին Ռուսաստան առաջին անգամ մուտք է գործում մետաքսի կուլտուրան, իսկ 1667 թուի Մայիս 31–ին Ալէքսանդր Միխայելովիչ կայսրը առանձին հրովարտակով իրաւունք է տալիս Նոր–Ջուղայեցի երկու վաճառականների՝ Ստեփան Մովսիսեանին եւ Գրիգոր Կուսիկեանին առանց մաքսի Ռուսաստան մետաքս բերելու եւ վաճառելու: Նոյն երեւոյթը տեսնում ենք նաեւ Պետրոս առաջին կայսեր շրջանում: 1723 թուականին նա Նոր–Ջուղայեցի հայ վաճառականներին Ռուսաստանում ազատ առեւտուր անելու իրաւունք է տալիս: Դարձեալ Նոր–Ջուղայեցի խօջա վաճառականներն են, որ Ռուսաստանում ամուր պատւանդանի վրայ են դնում չուխայի արդիւնաբերութիւնը, որի փայլուն ներկայացուցիչը հանդիսանում է մի խոշոր կապիտալիստ: Դա Նոր–Ջուղայեցի Աւետ Կօրօսեանն է: Նախաձեռնող, գործունեայ այս խօջան Պետրոս երկրորդ կայսրից առանձին հրովարտակով իրաւունք է ստանում Ռուսաստանում զբաղւելու արդիւնաբերական տընտեսութեամբ: Այդ նպատակով էլ նա Աստրախանում հիմնում է չուխայի մի մեծ գործարան:

Կանգնած ենք ԺԸ դարի կիսում: Այդ շրջանում եւս հրապարակ է գալիս Նոր–Ջուղայեցի մի այլ խօջա վաճառական: Դա Իգնատիոս Շէհրիմանեանն է: Այդ մեծ գրամատէրը Ռուսաստանում ազատ առեւտուր անելու համար 1756 թուին Մեծն Պետրոս կայսրից հրովարտակ ստանալով՝ Մոսկւայում կառուցել է տալիս մետաքսի եւ չուխայի մի գործարան, որն իր արտադրութեամբ ուրոյն տեղ է գրաւում Ռուսաստանի իր ժամանակի արդիւնաբերական կուլտուրայի պատմութեան մէջ եւ ընդգծում խօջա վաճառականի ձեռներէց ու կերտող պայծառ դիմագիծը:

Ռուսաստանի կերպասի եւ կտաւի, նոյնիսկ երկաթի ու չուգունի արդիւնաբերութեան պատմութեան էջերում եւս տեսնում ենք Նոր–Ջուղայեցի նախաձեռնող եւ գործունեայ հայ վաճառականների նկարները: Ահա դրանցից խոշոր գրամատէր եւ իշխանապետ Եղիազարը, որ Մոսկւայում իր հիմնած գործարանով զարկ է տալիս կերպասի եւ կտաւի արդիւնաբերութեանը, իսկ նրա անդրանիկ որդին՝ վեհագն Յովհաննէսը, Փերմ նահանգում կառուցում է երկաթի եւ չուգունի չորս գործարան:

Ընդգծենք նաեւ, որ անսպառ եռանդով եւ աննկուն ոգով օժտուած Նոր–Ջուղայեցի վաճառականները յաղթահարելով ժամանակի ճանապարհորդական դժւարութիւնները, շրջում են նաեւ Հնդկաստանի առեւտրական մեծ նշանակութիւն ունեցող վաճառաշահ եւ բազմամարդ խոշոր քաղաքները, անցնում են Բոմբէյ, Կալկաթա, Սուրաթ, Մադրաս, Զիչրա, Դաքքա, Սէյդարաբադ, Սինկափուր, Քաբլ, Պինանք եւ իրենց կապիտալով զարկ տալիս երկրի տնտեսական կեանքին, առանձնապէս առեւտրական ու արդիւնաբերական կապիտալին: Այդ երեւոյթի մի ցայտուն պատկերը տեսնում ենք Սէյդաբադում, ուր հռչակւում է Նոր–Ջուղայեցի Վահան եւ Ստեփաննոս Վարդանեանների հիմնած լեղակի եւ մետաքսի գործարանը:

ԺԸ դարի Զաւայի արդիւնաբերութեան պատմութեան մէջ եւս Նոր – Ջուղայեցի խօջա վաճառականները հրապարակ են գալիս: Նրանք գործում են երեք բազմամարդ գլխաւոր կենտրոններում — Բաթաւիա, Սուրբայիա եւ Սմարանգ: Հեռաւոր այդ վայրերում նրանք իրենց կապիտալով

ո՛չ միայն առաջնակարգ դիրք են գրաւում եւ հասնում բարձր զարգացման, այլ եւ լաւագոյն հիմքերի վրայ դնում երկրի արդիւնաբերական կուլտուրան: Այդ գծով էլ նրանք նպաստում են միջազգային արտադրութեանը: Դրանցից նշենք Ղազար Յովհաննեսի եւ Գալստան Մարտիրոսեանի անունները: Նոր – Ջուղայեցի այդ խօջաները Սուրբայիայում հռչակւում են իրենց շաքարի գործարաններով: Ահա եւ Գէորգ Մանուկեանի դիմանկարը (1764 – 1827), մէկը Նոր–Ջուղայեցի ժրաջան եւ հմուտ ա՛յն վաճառականներից, որ առանձնապէս փայլում է Բաթաւիայի առեւտրական կապիտալի ասպարիզում եւ իր մահից յետոյ ժառանգութիւն թողնում երկու միլիոն դիլդը:

Բնորոշ է եւ այն, որ փարթամութեան մէջ ապրող այդ խօջաները Նոր–Ջուղայում իրենց գեղեցիկ եւ փառահեղ տների պատերը նկարազարդել են տալիս գեղարւեստական նկարներով, որոնցից շատերը մինչեւ օրս էլ դեռ իշխում են պատերի եւ առաստաղների վրայ: Դրանք նկարչական արւեստի բաւական նուրբ գործեր են եւ ցոյց են տալիս ժամանակաշրջանի տարազաւոր նկարիչների ոճն ու դպրոցը:

ԺԸ ԴԱՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱՆՑՔԵՐԸ

Նոր–Ջուղայի խօջա հայ վաճառականների առեւտրական–տնտեսական վերելքի թափը, սակայն, կանգ է առնում ԺԸ դարի 30–ական թուականներին: Այդպէս են ստիպում պատմաշրջանի քաղաքական մռայլ դէպքերը: Եւ ահա փոթորկում է մի ամբողջ ժողովրդի հասարակական խաղաղ կեանքը: Դա Նադիր – Շահի թաղաւորութեան ժամանակաշրջանն է, որի ընթացքում պարսկահայերը, գլխաւորապէս Նոր Ջուղայի հայերն, ապրում են քաղաքական շատ ծանր օրեր: Ուսումնասիրէք այդ շրջանի իշխողների ռազմական արշաւանքների պատմութիւնը եւ այնտեղ պիտի գըտնէք ժողովրդի տանջանքները նկարող շատ յուզիչ տեսարաններ: Ահա քաղաքական այդ մռայլ շրջանի պատկերն իր ոտանաւորներով արձանագրել է նաեւ աշուղ Բաղէր օղլի Ղազարը: Այդ երգերից առանձնապէս նշանաւոր են երկու տաղերը — «Խաղ վասն հարստահարութեան Նադէր Շահի» եւ «Խաղ վասն նեղութեան Զուղայու», որոնց մէջ աշուղը նկարագրում է ԺԸ դարի առաջին կիսում ապրող Զուղահայ ժողովրդի դառն կեանքը: Նա չի կարողանում լուռ եւ անվրդով նայել, երբ պատմաշրջանի բռնակալներն անխիղճ կերպով շահագործում են ժողովրդին, երբ դառնացնում են նրա կեանքը: Երգել է նա գլխաւորապէս բռնակալ Նադիր – Շահի ձեռքից ժողովրդի քաշած անլուր ցաւերն ու տառապանքները, երգել է այն անասելի

digitised by A.R.A.R.@

հարստահարութիւններն ու բռնութիւնները, որոնց մէջ նա ապրել է եւ ականատես եղել: Ասենք, ուրեմն, մի քանի խօսք այդ շրջանի քաղաքական դէպքերի ձեւակերպման մասին:

Դա այն ժամանակաշրջանն էր, երբ Պարսկա–Օսմանեան եւ ազգանական կռիւները Պարսկաստանում անպակաս էին եւ որոնց հետեւանքով երկիրը քաղաքականապէս թուլացել էր: Հարկաւոր էր մի զօրեղ ձեռք, մի աննկուն ոգի, որ վերականգնէր ընկած Պարսկաստանը: Եւ ահա ասպարէզ է գալիս Պարսից պատմութեան մէջ մի նոր զօրագլուխ, որ չնորհիւ իր զինուորական եւ ռազմական ընդունակութեան ու ճկունութեան՝ կարողանում է Իրանի քաղաքական դրութիւնը բարեփոխել եւ հաստատուն հիմքերի վրայ դնել պետական նոր շէնքը: Դա Նադիր (Թահմազ) – Ղուլի խանն էր: Ո՞վ էր նա, ի՞նչ ծագում ունէր: Մի հասարակ աւազակապետ էր դա, որ ասպատակութիւններ էր գործում Խորասանի անապատներում: Բայց նա շուտով թողնում է աւազակի արհեստը, ծառայութեան մտնում Շահ–Թահմազի մօտ եւ կարճ ժամանակում զօրապետ, ապա ընդհանուր սպարապետ դառնում: Ահա այդ շրջանում էլ նա դաւաղրութիւն է սարքում Շահ – Թահմազի կեանքի դէմ եւ նրան սպանել տալիս: Նոյնպէս մանուկ շահ Աբբասը դայեակների ձեռքում կեանքից զրկւում: Այնուհետեւ, 1736 թուականի ձմեռը, Նադիրի հրամանով Մուղանի դաշտը հաւաքւում են Պարսկաստանի բոլոր աւագանիները՝ իշխանները, դաւառապետները եւ կուսակալները: Կանչւում է նաեւ Աբբահամ կաթողիկոսը: Գալիս են նոյնպէս Արարատեան երկրի, Նախիջեւանի եւ այլ վայրերի հայ մելիքները: Եւ ահա Իրանի թագաւոր է ընտրւում հէնց ինքը՝ Նադիրը: Մարտ 10–ին, պարսկական մեծ տօնի՝ Նովրուզ–Բայրամի օրը, Նադիրը հանդիսաւոր կերպով թագադրւում է եւ կոչւում Նադիր – Շահ: Թուրը կապում է Աբրահամ կաթողիկոսը: Այդ օրից էլ վերջանում է սեֆէվիների թագաւորութիւնը եւ սկիզբ դրւում Աֆշարների հարստութեանը:

Բազմելով թագաւորական գահի վրայ, Նադիրը, իբրեւ սիւնի, միացնում է Պարսկաստանի չիա եւ սիւնի դաւանութիւնները, որպէսզի միանգամայն վերջ տայ նրանց մէջ եղած բոլոր խտրութիւններին եւ կրօնական ներքին երկպառակութիւններին: Այնուհետեւ անցնում է զէնքի դլուխ եւ շուտով փայլում իր ռազմական եւ նուաճողական յաղթանակներով: Նա Իրանը մաքրում է նախ աւազաններից եւ յաղթում է ու ճնշում օսմանցիների ոյժը, ապա նոյն 1736 թուականին Սպահանից դընում է Ղանդահար, այնտեղից յարձակւում Հնդկաստանի վրայ եւ մեծամեծ դումարներով, 70 քրօր ռուբլով, 1739 թուականին, վերադառնում է Իրան: Ուղիղ 7 տարի անց, 1746 թուին, նա նորից իր սուրը դարձնում է օսմանցիների դէմ եւ բոլորովին նրանց յետ մղում, որով Հայաստանի արեւելեան մասը, մինչեւ Երեւան ու Նախիջեւան դարձեալ անցնում է պարսիկների ձեռքը:

Սակայն, Պարսկաստանի ազգաբնակութեան որոշ մասը, մանաւանդ Ղուզահայերը, մեծապէս տուժում են Նադիր–Շահի թագաւորութիւնից: Շերազում նա կոտորել է տալիս իր իշխանութեան չենթարկւողներին եւ նրանց դանկերից բուրգեր կանգնեցնում, իսկ Մեշէդում կուրացնել է տալիս սպասամբների աչքերը: Սարսափահար ժողովուրդը խմբերով փախչում է օտար երկիրներ:

Նադիրն անասելի անդթութիւններ է գործում նաեւ Նոր–Ջուղայում: Նա ծրագրում է զինուորական ծախքերը ձեռք բերել Նոր–Ջուղայի հարուստ հայերից: Այդ նպատակով նա հարկերով ծանրաբեռնում է ժողովուրդին: Իւրաքանչիւր տարի Նոր Ջուղայից պահանջում է տասը հազար թուման փող: Այդ գումարը հաւաքելու գործը

յանձնում է իր արքունիքի դիւանի ֆարաշներին, որոնք շրջելով Ջուղայեցիների տները, զանազան ճնշումներ են գործադրում եւ սարսափ ազդում: Նման ծրագրով Նադիրը, 1739–1747 թուականը, Նոր–Ջուղայի հասարակութեան տարբեր խաւերից առնում է 45,000 թուման փող: Սակայն, այդ չէ բոլորը: 1745 թուին նա, իբրեւ քմահաճ տուգանք, պահանջում է Նոր–Ջուղայից 60,500 թուման կանխիկ գումար: Այդ ծրագիրն իրագործելու պատասխանատուութիւնը յանձնում է իր աթոռապետ Մահմադ–Ռզա–Բէկին: Դաժան եւ ագահ բռնակալն անցնում է Նոր–Ջուղա եւ հասարակ ժողովրդին անասելի հարստահարութեան ենթարկելով՝ առնում է 37,000 թուման: Այնուհետեւ իր ամբողջ կատաղութիւնը թափում է Նոր–Ջուղայեցի իշխանների եւ խոջա վաճառականների վրայ, որոնցից ոմանք հարկապահանջների բռնութեան եւ հարստահարութեան չդիմանալով՝ փախչում են եւ ապաստանում լեռներում: Շատերն էլ ուխտադնացութեան կամ վաճառականութեան պատրւակով՝ խոյս են տալիս օտար երկիրներ, դէպի Հնդկաստան կամ Տաճկաստան(*): Սակայն, պատկերն աւելի յուզիչ է Նոր–Ջուղայից փախչող հայ իշխանների ընտանիքներում: Թագաւորի ֆարաշներն ու ծառաները մտնում են իշխանների տները, բռնում նրանց կանանց եւ խարանում նրանց տինքները, որդիներին էլ խոշտանգում, որպէսզի ցոյց տան իրենց ամուսինների թաղցրած փողերի տեղը: Էլ աւելի սոսկալի պատկեր է ստեղծւում, երբ բռնում են փախչող իշխանները: Դաժան ֆարաշները նրանց սասսիկ ծեծում են, ձեռքերի եւ ոտքերի եղունդների մէջ սրածայր եղէգներ մխում կամ յարդի ծխով շնչասպառ անում: Ահա նման սոսկալի տանջանքներով, մի ամսւայ ընթացքում, հայ իշխաններից առնում են 23,500 թուման կանխիկ փող:

Այս հարստահարութիւնների հետեւանքն այն է լինում, որ ժողովուրդը քայքայւում է տնտեսապէս եւ մի զարհուրելի սով է ընկնում Նոր–Ջուղայում, որի հետեւանքով շատերը թողնում են Նոր–Ջուղան եւ գաղթում դէպի Ռուսաստան, Հնդկաստան եւ այլ վայրեր:

Սակայն, Նադիր – Շահի թագաւորութիւնն երկար չի տեւում: Մահմադ–Սաալահ Բէկը եւ չորս զինուորական պաշտօնեաներ դաւադրութիւն են կազմում նրա կեանքի դէմ: Նրանք դիշերով մտնում են թագաւորի վրանը եւ կտրում նրա գլուխը:

Պատմական երգեր: Ահա ժամանակակից այդ յուզիչ դէպքերի պատկերն է, որ տալիս է մեզ Բաղէր օղլին իր երկու ոտանաւորով, որոնց մէջ նա սրտի դառն կսկիծով եւ բողոքի բուռն զգացմունքով նկարագրում է Նադիր–Շահի հարստահարութիւններն ու ճնշումները:

«Աստուա՛ծ, դու մեզ մի ճար արա,
Շահը թամամ աշխարհ ա ուզում.
Երկիր բանդում վարայ–վարայ,
Ոդչ զզար – զզար ա ուզում:
Ղզար ա դրա մաթլաբն,
Քաշում ա աստղերի խսաբն»:

Այսպէս՝ աշուղը դիմում է Աստծուն եւ մի «ճար» խնդրում, բռնակալ Նադիր–Շահից ազատւելու համար, որը ցանկանում է տիրել ամբողջ աշխարհին եւ այդ նպատակով «վարայ–վարայ» երկիր է քանդում ու՝

«Խունավարին բարբանդ անում,
Արզ անողին սպանում.
Ամէն գեղից մի ղուլ տանում,
Ղլի մի ճօբար ա ուզում»:

Կամ՝

«Բեալանթարներին բերում ա,
Թոռ ու չոր մի տեղ հրում ա»:

Այս տեսակ անտանելի բռնութիւնների կամ հարստահարութիւնների հետեւանքով՝ երկրում ընկնում է անասելի թան-

(*) Տե՛ս «Պատմութիւն Նադիր–Շահի» Հանէի, 1793, Լոնդոն:

digitised by A.R.A.R.@

գութիւն եւ ժողովուրդն այլեւս «սուլուկ» է ուտում, որով մեռնում են շատերը, բայց ո՛չ տէրտէր կայ, ո՛չ էլ «մուղդսի», որ թաղէ մեռելներին, բոլորն էլ փախել են եւ թաղնուել, իսկ մահացողներին շներն են ուտում.

«Սուլուկ կերանք, ընդուր մեր շունչ պարզէց,
Շատոնք մեռան՝ շներն կերան, չքաղվէց.
Տէրտէրանին փախան՝ մուղդսին գաղվէց,
Դատ կանչէց Գաբրիէլ, Մուրէլ հրեշտակն»:

Այնուհետեւ աշուղը պատմում է Նադիր Շահի սպանութիւնը եւ նկարագրում Նոր Ջուղայի դրութիւնը.

«Նադր-Շահին սպանեցին՝
Ասացինք. վերացաւ աշխարքիս չարքն.
Նոր Ադէլ շահ անուանեցին՝
Ասացին՝ դնչվէց էս աշխարքն:
Շունչ ու մափարն մեզնից վերացաւ,
Ով շաղկամ բերեց, փող բառցաւ,
Խացն ուրն ապասի դարձաւ.
— Բիստի գազարքն»:

Այս պատմական ոտանաւորները ԺԸ դարի Պարսկաստանի քաղաքական-տնտեսական անցքերը լուսաբանող արժէքաւոր աղբիւրներ են, միաժամանակ կարեւոր վաւերագրեր Նոր – Ջուղայի ժամանակակից պատմութիւնն ուսումնասիրելու համար: Ահա այդ աղբիւրից է, որ յետագայում օգտուել է նաեւ Յարութիւն Տէր-Յովհաննէսն իր «Պատմութիւն Նոր-Ջուղայու» գիրքը գրելիս: Այդ տաղերն էլ նա լոյս է ընծայել իր գրքում հետեւեալ լուսաբանութեամբ.

«Բաղէրը օղլի երգիչ յերգ ողբերգութեան առնէ այնր ժամանակի գաղէտս Ջուղայու, եւ կարդայ զդամբանական ողբերգս 'ի վերայ Նադիրի, զոր հարկաւոր համարիմ 'ի կարգի պատմութեանս նշանակել»:

Խրատական-Բարոյական: Բաղէրը օղլին թողել է նաեւ մի քանի խրատական-բարոյական երգեր, որոնք պարզ դաղափար են տալիս նրա բարոյական աշխարհահայեցողութեան մասին: Աշուղն, իբրեւ բարի ծերունի, իբրեւ ճշմարիտ հաւատացեալ, խրատում է «Աղամորդուն» իր Ստեղծողին միշտ միտ բերել, ժամ դնալ եւ աղօթել.

«Ադամայ որդի, քո Ստեղծողին միտդ բեր,
Գիշեր, ցերէկ փառքն տուր համիշայ.
Փառք տուր Աստծուն, ասա՝ Հայր մեղա՛յ,
Զոքի՛ր, ասա՝ Տէր ողորմա՛, Տէր յիշա՛,
Տէր յիշեա՛ ասա՝ գնա ժամի դուռ,
Որ յամենայն ժամանակ քեզ քօմակ եկնի կուռ»:

Այնուհետեւ, ծերութեան օրերում, աշուղն աշխարհիս ունայնութիւնն ու մահն իր միտ բերելով՝ ջերմեռանդութեան է դիմում եւ ինքն իրեն խրատում.

«Ե՛կ, իմ անդադար սիրտ՝ քեզի տամ օգուտ,
Գիշեր, ցերէկ քո փառքն տուր համիշայ.
Փառք տո՛ւր Աստուծոյ, ա՛ռ ողորմութիւնն,
Դրիստ պահի՛ր քո շարք եղրար լուսնքն»:

Աշուղն իրենով ուրիշներին խրատելու նպատակով, իր սեփական իմաստութիւնից եւ փորձառութիւնից առաջ է բերում բազմաթիւ խրատական մտքեր եւ դատողութիւններ, այսպէս՝

«Զօրաքն նամարդին չի՝, տղամարդինն ա,
Զունիքի ինքն իւր եղրար ու շարքին ա.
Իմանողի քշտին խափաքն մին ա,
Զը ծակես դանակով, չը տաս քաղաքով»:

Բաղէրն իր արտայայտած բարոյական-խրատական դաղափարներով յիշեցնում է միջնադարեան հայ տաղերդուների բարոյախօսութեան էութիւնը: Ահա մի այլ նըմուշ.

«Առանց համբերութեան դու բան մի՛ առել,
Օտար ձեռքով քո նրագն մի՛ վառել.
Նօվքիսայ մարդի հետ սօվտայ մի՛ առել,
Եթէ քաղցած մնաս օրով, շաբաթով»:

Սիրային: Բաղէրի միւս երգերը սիրային են եւ արեւելեան զովասանութիւններով լի: Այդ երգերից մէկի մէջ աշուղը վառ գոյներով նկարում է եարի չքնաղութիւնը եւ հեթանոսական պաշտամունքով փառաբանում նրա դէղն ու հրապոյրը: Նրա եարն ունի սիրուն երես, որ աշխարհիս շնորհքն է, դեղեցիկ յօնքեր, որոնք աշուղի խելքը տանում են դլխից, «արեւական» աչքեր, որոնցից լուսինն է սասանում, սիրուն ծամ, որ հանում է ճանապարհից թէ՛ Թուրքի եւ թէ՛ հայի, վերջապէս, վարդահամ «քրտունքներ», որոնք անմահական ջուր են: Ահա այդ բոլոր չքնորհքները, որ Աստուած պարգեւել է աշուղի եարին, դարձրել են նրան «հրեղէն», որի նմանը չկայ ո՛չ «հողեղինում» եւ ոչ էլ Մօսկոֆում, Շամում, Հալաբում, Թիֆլիսում ու Գիւրջստանում.

«Աչքդ արեկական, լուսնի սասանի,
Լուսնակն շաւիղդ տեսնի, փաս առի.
Հողեղինում չկայ, որ քեզ խասանի,
Հրեղէն ես, ամէն քեզ էր ետ Աստուած:
Մօսկոֆ ու Մարդամ, Շամս եւ կամ Հալաբ,
Թիֆլիս, Գիւրջստան թայ չունիս մաթլաբ.
Քրտունքդ անմահական ջուր ասեմ գուլաբ,
Դրախտի շօրն ամէն քեզ էր ետ Աստուած»:

Հայ միջնադարեան երգիչներից շատերը՝ Ղազար Սեբաստացի, Յովհաննէս Թլկուրանցի, Գրիգորիս Աղթամարցի, Նահապետ Քուչակ, նոյն պատկերներով եւ գոյներով դրւատել են իրենց եարերի դեղեցկութիւնը եւ նրանց նմանը չեն գտնում աշխարհիս երեսին: Համեմատութեան համար առաջ բերենք մի քանի նմուշներ.

«Երեսդ է կարմիր, քան զխայտ խնձոր,
Բերանդ է փոքրիկ, դնչիկդ է բոլոր.
Դերձան մազդ արեր ես վզիդ ոլոր,
Քո սէրդ արեր զիս շոլոր մոլոր:
Հա՛յ իմ անմման, չկայ քեզ նման,
Ո՛չ Խորասան, ո՛չ 'ի Հնդկաստան...»:

Այսպէս է գծում Ղազար Սեբաստացին իր եարի պատկերը: Նոյնպիսի վարպետ վրձինով նկարել է նաեւ Յովհաննէս Թլկուրանցին: Ահա նրա սիրուն եարի նկարը.

«Ծով-ծով աչեր ու լուսնաք,
Ունքն կեռ էր քան զկամաք.
Ճակատն է լուս ու լուսնաք,
Բոլոր լուսին, շամս ու դամաք»:

Ահա եւ Գրիգորիս Աղթամարցու եարի դիմագիծը.

«Շրթունքդ է շաքար, խօսունքդ դանդ է,
Լեզոդ ի բերանդ, անգին ջուհար է.
Դու ես արեգակ, լուսին ի լման,
Չկայ քեզ նման ի յազգս մարդկան»:

Որ Բաղէրը օղլին իր եարի պատկերը վերձինելիս ազդել է այս բանաստեղծութիւններից, ո՛չ մի կասկած չկայ:

Գեղեցիկ եարին սիրում է նա ջերմ, անսահման սիրով: Այդ սիրովը խելայեղ՝ նրա սիրոն այլեւս ո՛չ մի տեղ հանգիստ չունի. եարի սէրը նրա մէջ յարուցանում է զանազան խոհեր եւ զգացումներ. նա ձգտում է անուշ եարի հետ գետափը գնալ «թամաշայի».

«Էն օրն ինչ կելնի քեզ տեսնեմ բարով,
Իմ սիրտն ու քո սիրտն մին շառք էղրանով,
Դաս քէ զարդան անենք, զուշայ քնարով,
Թամաշայ երթանք գետափն, ինչ կելնի»:

Եւ այդ պատկերից աւելի մեծ երջանկութիւն չկայ աշուղի համար: Սակայն, եարը չի սիրում երգչին եւ նրան թողնում է օտար «ճարում» դարբէդար: Սիրակրոյս աշուղը համակած անհուն թախիծով դիշեր եւ ցերեկ տանջւում է սիրոյ կրակից, բայց վերջը նա անմեղ զանգատներով դիմում է եարին, պատմում իր ցաւը եւ խնդրում, որ իրեն «խօշհալ» անի.

«Էդ ինչ խասիաթ ա իմ սիրելի եար,
Թող մէկ օր խօշհալ անես, ի՛նչ կելնի.
Զուր յեփ դարբէդար անես դարդմանդ,
Դու գոս քո մօր կշտիցն, ի՛նչ կելնի»:

Անցնում է վեց օր, բայց եարը դարձեալ չի դալիս: Աշուղն այլեւս չի կարողանում դիմանալ եւ խելայեղ ման է դալիս, որ սիրականին գտնի ու իմանայ նրա մտադրութիւնը.

«Գտանեմ, սիրտն իմանամ,
Զրուց տամ, գօփքարն տեսնեմ.
Զրուց, գօփքար շատացել ա,
Սօր վեց օր ա գնացել ա»:

Վերջ ի վերջոյ աշուղը գնում է եարին տեսնելու. նրա սենեակն ամբողջ «մէջլիս» էր, իսկ «թաղն» ոսկէթուփ: Եարն երգչի ձեռքից բռնած՝ գնում է ծաղիկներով եւ վարդերով զարդարուած դեղեցիկ այդին.

«Ձեռս բռնէց, տարաւ իգին,
Գիւլ գիւլստան բաղն թամամ»:

Այսպիսով աշուղը հասնում է իր նպատակին: Այնուհետեւ, նա սիրուհու հետ

ՊԵՏԱԿԱՆ ՄՐԱԳԱՐԱՆ Гос. Библиотека ՀՍՍՌ-Арм.ССР им. А. Мясникяна Ա. ՄԵՍՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

digitised by A.R.A.R.@

նատած՝ քաղցը եւ պատկերաւոր լեզուով զրոյց է տալիս.

«Ասի· երեսդ արեկական նման ա,
Ասէց· աչքերս շատս ու դամար ա·
Ասի· մազերդ չո՛ւմ տէնց փէրիշան ա,
Ասէց· ե՛կ ոլորիր, ծամ արա՛ սիրոյն:
Ասի· նազլու դիլբար, քո սէրն ինձ կ'սպանի,
Ասէց· չի սպանել, խելքդ կ'տանի»:

Երգիծական: Բաղէր օղլին թողել է նաեւ երգիծական մի քանի ոտանաւորներ, որոնցից մէկի մէջ նա կատակելով խօսում է Բաբանենց ջհուդների մասին.

«Էլս տեսէք, ինձ ինչ արարին
Լանգ Բաբանէնց ջհուդներն·
Ինձ տարան տունն հալով,
Բանացուին դալմաղալով·
Անխաց դուս արարին լալով,
Լանգ Բաբանէնց ջհուդներն»:

Միւս ոտանաւորը հակադրութիւն է, ուր աշուղը մի շարք այլաբանական մտքերով քննադատում է իր ժամանակակից տիպերին.

«Խալալ խէր խօյ չեմ, թէ հարախէդ գրկեմ,
Մգամ ես քարտաշ ամ, քո կապէն ներկեմ·
Սովդագար ամ, կուզե՞ս առտէրդ բրեմ,
Խառատ խօյ չեմ, քեզ լուդ ծախեմ:
Փալվան խօյ չեմ, թէ զօմ ճրաքդ վառեմ,
Մգար ես բօշայ եամ, որ պաշտում առեմ·
Դալաք ամ, կուզե՞ս արախչիդ կարեմ,
Հալաջ խօյ չեմ, որ ես դուդ ծախեմ»:

Ահա մեծ մասամբ այն ամէնը, ինչ որ հասել է մեզ աշուղի քնարից:

Լեզուն: Բաղէրի երգերը գրուած են Նոր Ջուղայի բարբառով, որոնց մէջ, սակայն, կան բազմաթիւ թուրքերէն բառեր, որոնք յաճախ վնասում են ոտանաւորների գեղարուեստականութեանը: Բայց չնայած դրան՝ Նոր–Ջուղայի ինքնատիպ բարբառը հետաքօտելու տեսակէտից այդ երգերի լեզուն արժանի է ուշադրութեան:

Ընդհանուր հայեացք: Աշուղ Բաղէր օղլին ԺԸ դարի մինչեւ առաջին կէսն ապրող լաւագոյն աշուղներից մէկն է, որ իր սազով եւ երգերի մօտիւներով ժողովրդի մէջ վառ է պահել աշուղութեան սէրը, միաժամանակ զարգացրել է հայ գուսանական գրականութիւնն ու արուեստը: Նա իր մբոտաւոր մակարդակով աւելի բարձր կանգնած լինելով իրեն շրջապատող հասարակութիւնից, իր երգերով ու աշուղական նուագով որոշ ազդեցութիւն է ունեցել ժամանակակիցների հոգեկան աշխարհի վրայ եւ կարողացել է յարգանք ու պատիւ ձեռք բերել:

Իբրեւ ստեղծագործող աշուղ, նա իր քնարի լարերի վրայ հնչեցրել է բազմերանգ մօտիւներ: Երգել է իր անհատական յոյզերն ու ապրումները, երգել է իր սիրած կոյսի սէրն ու դեղեցկութիւնը: Այդ երգերի մէջ նա զտարիւն լիրիկ–աշուղ է: Բայց նա չի ապրել միայն իր անձնական եսով, չի գծել միայն իր կեանքի եւ սիրոյ պատմութիւնը: Իբրեւ զգայուն եւ ժողովրդասէր մի աշուղ, արծարծել է նաեւ բարոյական հայեացքներ ու մտքեր, քննադատել է իր ժամանակակիցների բացասական գծերը, հարուածել է նրանց պակասութիւններն ու թերութիւնները եւ, որ էականն է, երգել է ժողովրդի վիշտն ու ցաւերը: Այն ժամանակ, երբ պատմաչրջանի իշխողները տանջել են ժողովրդին, նա լուռ ու անտարբեր չի մնացել, այլ ապրել է նրա ցաւերով եւ նրան նուիրել իր երգերը: Գլխաւորապէս նկարել է ԺԸ դարում ապրող Նոր–Ջուղայի հայ հասարակութեան կրած անասելի տանջանքների պատկերը: Նա հարազատութեամբ նկարագրել է դարաշրջանի այն բոլոր յուզիչ ու մռայլ դէպքերը, որոնց ականատես է եղել:

Այդ երգերի ուսումնասիրութեամբ այսօր պարզ դաղափար ենք կազմում ԺԸ դարի մինչեւ առաջին կէսն ապրող Նոր–Ջուղայի հայ ժողովրդի փոթորկալից կեանքի եւ քաղաքական մռայլ անցքերի մասին: Այդ երեւոյթներով էլ բնորոշւում է աշուղ Բաղէր օղլու Ղաղարի աշուղական գործունէութեան եւ երգերի հասարակական նշանակութիւնը:

***

ՃՇՏՈՒՄՆԵՐ

Ամերիկայում (Բոստոնում) լոյս տեսնող «Հայրենիք» ամսագրի 1933 թուի 7 համարում, ընկ. Նոր–Ջուղայեցի Պ. Արամայիս Ալլահվէրդեանը «Աշուղ Բաղէր օղլի» խորագրով մի յօդուած է տպագրել, ուր նա պարզել է հետեւեալ սխալ տեսակէտը.

Սրանով ուզում ենք փորձել եւ պատմական տուեալներով հաստատել, որ մօտաւորապէս 230–40 տարի առաջ Նոր–Ջուղայում ապրող Բաղէր օղլին եղել է ամենառաջին հայ աշուղը, որից մօտ 20–ի չափ երգեր են հասել մեր ձեռքը (էջ 115)»:

Նոյն անճիշտ միտքը նա կրկնել է նաեւ ամսագրի 119–120–րդ էջերում, այն էլ այսպիսի ընդգծուած տողերով.

«Պարզւում է, ուրեմն, որ ամենառաջին հայ աշուղը, որից 18–ի չափ գրաւոր երգեր են հասել մեզ ԺԷ դարի վերջերում ծնուած եւ հաւանօրէն մինչեւ յաջորդ դարի կիսերն ապրած հալաջ Ղազարն է եղել՝ Բաղէր օղլին»:

Ո՞վ ասաց, ո՞րտեղ է գրուած, ի՞նչ փաստ կայ, որ ամենառաջին հայ աշուղը Բաղէր օղլին է: Ալլահվէրդեանի այդ կարծիքը թիւրիմացութիւն է եւ պատմական անճշտութիւն: Փաստն այն է, որ ամենառաջին հայ աշուղը Բաղէր օղլին չէ, որովհետեւ Նոր–Ջուղայեցի այդ երգչից շատ առաջ թէ՛ Հայաստանում եւ թէ՛ Տաճկաստանում հրապարակ են եկել մի շարք աշուղներ, որոնք ժողովրդի մէջ հնչեցրել են աշուղական սազն ու երգերը: Դրանցից առայժմ յիշատակենք միայն Հաղարան օղլի աշուղին, որ երգեր է յօրինել եւ աշուղական սազը հնչեցրել է Բաղէր օղլուց առաջ, դեռ 1570 թուականին:

Նոյնպէս անպատասխանատու յայտարարութիւն եւ սխալ պիտի համարել Պ. Արամայիս Ալլահվէրդեանի հետեւեալ կարծիքը.

«Բաղէր օղլին բռնում է առաջին տեղը Ջուղահայ ամենահին աշուղների մէջ (Հայրենիք 1933 տ. թ. 7, էջ 114)»:

Եթէ Պ. Ալլահվէրդեանը բարեհաճի դէթ մի անգամ շրջել Նոր–Ջուղայի հայոց գերեզմանատունը եւ աչքէ անցկացնել հին տապանաքարերը, այնտեղ պիտի հանդիպի Բաղէր օղլուց առաջ մահացած աշուղների: Դրանցից նշենք միայն Մարգարին, որի տապանաքարի վրայ քանդակուած է աշուղի նկարը, որ ծալապատիկ նստած՝ նւագում է չօնդուրի վրայ, իսկ քարի ցածի մասում փորագրուած է.

Տապանս պրն· Մարգար Է·
թվ· ՌՃԱ (1101+551=1652):

Այս արձանագրութիւնն էլ հերքում է Պ. Արամայիս Ալլահվէրդեանի այն կըտրուկ եւ սխալ տեսակէտը, թէ Բաղէր օղլին է բռնում առաջին տեղը Ջուղահայ ամենահին աշուղների մէջ:

Ի՞նչ են ասում մեր ընդգծած փաստական տուեալները: — Այն, որ Պ. Արամայիս Ալլահվէրդեանը «Հայրենիք» ամսագրում աշուղ Բաղէր օղլու մասին հաղորդել է միանգամայն անճիշտ, սխալ տեղեկութիւններ, որոնք իրենց էութեամբ աղաւաղում են հայ աշուղական գրականութեան խնդիրն եւ հարազատ պատկերը:

Թէհրան ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

digitised by A.R.A.R.@